



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail:

info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

05.03.2018թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Աշոտ Ղահրամանյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Ղահրամանյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հողված է պատրաստում Արմավիրի մարզում գյուղատնտեսական տեխնիկայի առկայության, առաջացող դժվարությունների վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Մարզում քանի՞ միավոր գյուղտեխնիկա կա, դրանցից քանի՞սն են գտնվում սարքին վիճակում: Տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ տեխնիկայի տեսակի և սարքինության վիճակի:
2. Մարզում ի՞նչ գյուղտեխնիկայի անհրաժեշտություն կա և որքա՞ն: Ո՞ր տարածքում է ավելի քիչ տեխնիկա աշխատում: Տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ տեխնիկայի տեսակի և քանակի, տարածքի:
3. Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում մարզում գյուղատնտեսական տեխնիկայի պակասը լրացնելու ուղղությամբ:
4. Մարզում գործող գյուղտեխնիկան հիմնականում հի՞ն է, թե՞ նոր արտադրված:
5. Գյուղտեխնիկայի պակասը կամ մաշվածությունը որքանո՞վ է վնասում կամ խոչընդոտում մարզում գյուղատնտեսության զարգացմանը:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան